

**ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ  
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ**

**Գներ**

**ՀՀ սպառողական գների ինդեքսը (ՀՀ ՄԳԻ)** որոշում է կայուն զամբյուղի ապրանքների գների և ծառայությունների սակագների ընդհանուր մակարդակի փոփոխությունը ժամանակի ընթացքում և այդ արժեքի հարաբերակցության մեծությունը հաշվետու ժամանակահատվածում բազիսային ժամանակահատվածի համեմատ:

ՄԳԻ-ն բնութագրում է բնակչության կողմից ձեռք բերված ապրանքների և ծառայությունների գների և սակագների ընդհանուր մակարդակի փոփոխությունը տարեկան, եռամսյակային, ամսական պարբերականությամբ:

Ապրանքների սպառումն ու խմբավորումներն իրականացվում են ըստ Անհատական սպառում ըստ նպատակների դասակարգչի (ԱՍԸՆԴ): ՄԳԻ-ի հաշվարկման համար ք.Երևանում և ՀՀ 10 մարզերում սահմանված մեթոդաբանությամբ, կատարվում է սպառողական գների (սակագների) ամենամսյա դիտարկում:

Ըստ մարզերի գների դիտարկումը կատարվում է հետևյալ քաղաքներում.

**Մարզի անվանումը    Դիտարկվող քաղաքը**

Արագածոտն	Աշտարակ
Արարատ	Արտաշատ
Արմավիր	Վաղարշապատ
Գեղարքունիք	Գավառ
Լոռի	Վանաձոր
Կոտայք	Հրազդան
Շիրակ	Գյումրի
Սյունիք	Կապան
Վայոց Ձոր	Եղեգնաձոր
Տավուշ	Իջևան

Սահմանված է գների դիտարկման հետևյալ կարգը. ՀՀ ՄԳԻ-ի հաշվարկման համար գների դիտարկումներն իրականացվում են ամսական պարբերականությամբ, առևտրի և ծառայության կետեր երեքանգամյա այցելության միջոցով՝ հստակ պահպանելով այցելությունների 10-օրյա միջակայքը (յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-ին, 20-ին և դրանց մոտակա օրերին):

Ընդհանուր առմամբ, իրականացնելով ամսական երեքանգամյա դիտարկումներ, յուրաքանչյուր բազային օբյեկտ գնադիտարկողը տվյալ ամսվա ընթացքում այցելում է մեկ անգամ: Երկու այցելությունների միջև ընկած ժամանակահատվածը յուրաքանչյուր բազային օբյեկտի համար կազմում է մեկ ամիս:

Թարմ միրգ, բանջարեղեն, վառելիք (բենզին, դիզելային վառելիք) ապրանքախմբերում ընդգրկված ապրանք-ներկայացուցիչների գծով դիտարկումներն իրականացվում են ամսական երեքանգամյա պարբերականությամբ՝ 1-ին, 10-ին և 20-ին կամ դրանց մոտակա օրերին՝ յուրաքանչյուր դիտարկման ժամանակ այցելելով դրանց դիտարկման համար ընտրված բոլոր դիտարկման օբյեկտները:

ՄԳԻ-ի հաշվարկներում ներկայումս ընդգրկված են 425 ապրանք-ծառայություն (տարրական ազրեգատներ, որոնք ունեն համապատասխան տեսակարար կշիռ): Ամեն ապրանքի (ծառայության) համար ընտրվում է հստակ նկարագրերով երկուսից երեք

ներկայացուցիչ: Յուրաքանչյուր ապրանքի (ծառայության) համար գների դիտարկման նպատակով ընտրվում է 3-ից 12 առևտրի ծառայության բազային կետ՝ հաշվի առնելով տվյալ մարզում դիտարկվող քաղաքի բնակչության թվաքանակի, ապրանքաշրջանառության և ծառայությունների ծավալների մասին ցուցանիշները:

ՍԳԻ-ի ապրանքների և ծառայությունների զամբյուղի կշիռների ձևավորման համար անհրաժեշտ ցուցանիշները ստացվում են առաջնահերթ՝ հիմնվելով Արմստատի կողմից յուրաքանչյուր տարի իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) արդյունքում ձևավորված դրամային ծախսումների մասին տվյալների վրա:

Մարզերի տեսակարար կշիռները ձևավորվում են հետևյալ վիճակագրական ցուցանիշների հիման վրա՝ ապրանքաշրջանառության ծավալ, մատուցված ծառայությունների ծավալ, բնակչության թվաքանակ:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության դրամական ծախսումների մասին տվյալները, որի արդյունքում արձանագրվել են 2020 թվականի ՍԳԻ-ի զամբյուղի սպառման համամասնությունների համեմատ որոշակի փոփոխություններ, վերանայվել է 2021 թվականի ՍԳԻ-ի կազմը և կառուցվածքը: 2021 թվականի ՍԳԻ-ի հաշվարկման համար բազիսային ժամանակաշրջան է ընդունվել 2020 թվականի դեկտեմբեր ամիսը:

ՀՀ-ում ՍԳԻ-ն հաշվարկվում է տարբեր ժամանակահատվածների՝ հաշվետու ամիսը բազիսային ժամանակահատվածի՝ նախորդ տարվա դեկտեմբերի, նախորդ ամսվա, նախորդ տարվա համապատասխան ամսվա, հաշվետու ժամանակաշրջանը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի (աճողական կարգով) նկատմամբ:

ՀՀ-ում ՍԳԻ-ն հաշվարկելու համար կիրառվում է Լասպեյրեսի բանաձևի հետևյալ տարբերակը.

$$I_{on} = \frac{\sum P_{nj}}{\sum P_{n-1,j}} \times P_{n-1j} Q_{oj} \times 100,$$

$$\text{որտեղ}^{\text{a}} P_{n-1j} Q_{oj} = P_{oj} Q_{oj} \times \frac{P_{1j}}{P_{oj}} \times \frac{P_{2j}}{P_{1j}} \times \dots \times \frac{P_{n-1j}}{P_{n-2,j}}$$

**I<sub>on</sub>** – n ժամանակաշրջանի ինդեքսն է համեմատած o բազիսի հետ,

**P<sub>oj</sub>** – j ապրանքի գինն է o բազիսային ժամանակաշրջանում,

**P<sub>nj</sub>** – j ապրանքի գինն է n հաշվետու ժամանակաշրջանում,

**Q<sub>oj</sub>** – j ապրանքի տեսակարար կշիռն է բազիսային ժամանակաշրջանում:

**ՀՀ արդյունաբերական արտադրանք արտադրողների գների ինդեքսը (ՀՀ ՍՍԱԳԻ)**

բնութագրում է արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների փոփոխությունը ժամանակի ընթացքում՝ առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի հաշվարկման: Արդյունաբերական արտադրանք արտադրողների գների ինդեքսի հաշվարկման կարգի մեթոդաբանությունը նպատակաուղղված է արդյունաբերության ոլորտի<sup>1</sup> կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների մակարդակի և փոփոխության վիճակագրական դիտարկման ապահովմանը:

Արդյունաբերական արտադրանք արտադրողների գների փոփոխության դիտարկումն իրականացվում է ընտրանքային կարգով ընտրված արդյունաբերության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների տվյալների հիման վրա: Հետազոտման համար ընտրվում են Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ) հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման, մշակող արդյունաբերության, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման բաժիններին համապատասխան գործունեություն ծավալող առավել բնորոշ կազմակերպությունները:

Արդյունաբերական կազմակերպությունների ընտրանքն իրականացվում է կշիռների նորացման (թարմացման) հետ միաժամանակ: ՀՀ արդյունաբերական արտադրանք արտադրողների գների ինդեքսի հաշվարկն իրականացվում է «ՀՀ արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման կարգ»-ին (հաստատված ՀՀ ՎՊԽ 2009թ. դեկտեմբերի 23-ի թիվ 49-Ա որոշմամբ) համապատասխան:

Ինդեքսների հաշվարկն իրականացվում է Լասպեյրեսի բանաձևով՝ ամսական պարբերականությամբ, համաձայն Արդյունաբերական արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների (ԱՄԴԳՏ) դասակարգչի՝ արտադրանք, ըստ ՏԳՏԴ-ի՝ դաս, խումբ, հատված, բաժին ագրեգացման աստիճանների և ընդամենը՝ ՀՀ ՍՍԱԳԻ -ի:

Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը հաշվարկվում է հետևյալ կտրվածքներով. յուրաքանչյուր ամիսը նախորդ ամսվա նկատմամբ, բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ, նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, ընթացիկ ժամանակաշրջանը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական կարգով), եռամսյակային ինդեքսներ:

**ՀՀ գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների ինդեքսն** արտահայտում է գյուղատնտեսական արտադրանք արտադրողի տարբեր ուղղություններով իրացված արտադրանքի գների փոփոխությունները ժամանակի, ինչպես նաև տարածության մեջ: Այն հաշվարկվում է ՀՀ-ում 7 440 գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված 58 անվանում գյուղարտադրանքի գների ագրեգացման միջոցով՝ ըստ բուսաբուծական և անասնաբուծական արտադրանքի և ըստ ՀՀ մարզերի: Դրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին արտադրատեսակների ինդեքսների կշռված մեծություն, ընդգրկված միատեսակ ապրանքախմբում:

Որպես անհատական ինդեքսների կշռման բազա օգտագործվում է հաշվետու ամսում իրացված արտադրանքի ծավալը և ինդեքսը հաշվարկվում է Պաշտեի բանաձևով:

<sup>1</sup> Ներառում է ՏԳՏԴ- B,C,D,E բաժինները:

**ՀՀ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը** բնութագրում է արտադրության միջոցների գնման գների փոփոխությունների շարժը հաշվետու ժամանակահատվածում՝ բազիսայինի համեմատ: Հաշվարկվում է 7 440 գյուղացիական տնտեսությունների կողմից ձեռք բերված 56 անվանում արտադրության միջոցների գնման գների հետազոտման տվյալների հիման վրա:

Որպես անհատական ինդեքսների կշռման բազա օգտագործվում է հաշվետու ամսում ձևավորված արտադրության միջոցի գնման ծավալը և ինդեքսը հաշվարկվում է Պաաշեի բանաձևով:

**ՀՀ բեռնափոխադրումների սակագների ինդեքսը** բնութագրում է տրանսպորտի տարբեր տեսակներով բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները ժամանակի ընթացքում: Ագրեգացվում է հանրապետությունում գործող չորս տեսակի՝ ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, մայրուղային խողովակաշարային բեռնափոխադրումների սակագների հաշվարկված ինդեքսների միջոցով: Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը որոշում է տրանսպորտի առանձին տեսակներով բեռնափոխադրումների սակագների շարժն ընթացիկ ժամանակահատվածում բազիսայինի համեմատ՝ առանց հաշվի առնելու տեղափոխվող բեռների կառուցվածքային փոփոխությունների հետ կապված հանգամանքները (բեռի տեսակը, փոխադրման չափը, տեղ հասցնելու արագությունը և այլն): Տրանսպորտի յուրաքանչյուր տեսակի գծով (ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, մայրուղային խողովակաշարային) գրանցվում է ծառայություններկայացուցչի բեռնափոխադրման սակագինը, ինչով պայմանավորվում է տրանսպորտի կոնկրետ տեսակով առավել հաճախ փոխադրվող մեկ միավոր բեռի (տոննա, խորանարդ մետր) առաքումը փաստացի տարածության վրա (որոշակի երթուղով): Որպես կշռման բազա ընդունվում են որոշակի բազիսային ժամանակահատվածում (հիմնականում՝ նախորդ տարում) բեռների տեղափոխման ծառայությունների դիմաց տրանսպորտային կազմակերպությունների կողմից ներկայացված եկամուտների մասին տվյալները: Բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկներն իրականացվում են Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (SՊՏԴ) համապատասխան:

**ՀՀ արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսը** բնութագրում է արտաքին առևտրի ապրանքների գների փոփոխման հաշվին արտահանման և ներմուծման արժեքի փոփոխությունը անփոփոխ, հաստատուն ֆիզիկական ծավալի պայմաններում: Արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսների հաշվարկի համար որպես տվյալների սկզբնական աղբյուր հիմք են հանդիսանում ներմուծման, արտահանման բեռնամաքսային հայտարարագրերը: Մտացված տվյալների գաղտնիությունն ապահովելու համար մշակվում է արտաքին առևտրի ներմուծման (արտահանման) գների ինդեքսների հետագա հաշվարկի համար հատուկ տվյալների բազա: Հաշվարկներին մասնակցող ընտրված ապրանքներին են վերաբերվում այն բոլոր միատարր ապրանքատեսակները, որոնք ծածկագրված են ըստ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳԱԱ) դասակարգչի տասը նիշ ծածկագրերի,

- դասակարգված են՝
  - ըստ ապրանքային ենթախմբերի,
  - ըստ ապրանքային խմբերի,

- ըստ ապրանքային բաժինների,
- ունեն ապրանքի քանակի և արժեքի մասին տվյալներ,
- պարունակում են տեղեկատվություն տվյալ ապրանքն արտահանող կամ ներմուծող երկրի մասին:

*Արտաքին առևտրի գների ինդեքսների հաշվարկը տարվում է 4 ուղղություններով՝*

- «ըստ բոլոր երկրների»,
- «ըստ ԱՊՀ երկրների»,
- «ըստ այլ երկրների»,
- «ըստ Եվրամիության երկրների»:

Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկի համար կիրառվում է Լասպեյրեսի միջին արժեքի ինդեքսի բանաձևը: Դա թույլ է տալիս համադրել ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի հետ: Միավորի արժեքը (զինը) կշռվում է բազիսային ժամանակաշրջանի առևտրային հոսքերով, որոնք կարող են տարեցտարի զգալի տատանվել, կորցնել արդիականությունը և նպաստել գների ինդեքսների արհեստական աճին (նվազմանը): Ուստի, այնպիսի բնագավառում ինչպիսին արտաքին առևտուրն է, նպատակահարմար է որպես բազիսային ժամանակաշրջան ընդունել նախորդ տարին:

ՀՀ-ում արտաքին առևտրի գների ինդեքսը հաշվարկվում է ամսական կտրվածքով:

«Ըստ ԱՊՀ երկրների», «ըստ այլ երկրների» և «ըստ Եվրամիության երկրների» ուղղություններում ինչպես ընթացիկ ամսվա, այնպես էլ բազիսային տարվա համար հաշվարկվում է առանձին ապրանքատեսակների ներմուծման (արտահանման) միջին արժեքը (զինը) հետևյալ բանաձևով.

$$\bar{P}_i = \frac{V_i}{Q_i}$$

որտեղ՝

- $P_i$  -  $i$ -րդ ապրանքատեսակի միջին արժեքն է,
- $V_i$  -  $i$ -րդ ապրանքատեսակի ծավալն է գումարային արտահայտությամբ,
- $Q_i$  -  $i$ -րդ ապրանքատեսակի քանակն է:

Օգտագործելով տոկոսային փոփոխությունների փոխկապակցման (ագրեգացման) եղանակը, ապրանքային ենթախմբերի ինդեքսների հիման վրա հաշվարկվում են ապրանքային խմբերի, բաժինների միջին արժեքների ինդեքսներ, ինչպես նաև ներմուծման և արտահանման գների ամփոփ ինդեքսներ «ըստ ԱՊՀ երկրների», «ըստ այլ երկրների» և «ըստ Եվրամիության երկրների» հետևյալ բանաձևով՝

$$I_E = \frac{\sum_{i=1}^n \frac{\bar{P}_{it}}{P_{io}} * W_{io}}{\sum_{i=1}^n W_{io}}$$

որտեղ՝  $I_E$  - յուրաքանչյուր ապրանքային ենթախմբի միջին արժեքի ինդեքսն է,

$P_{it}$  -  $i$ -րդ ապրանքի միջին արժեքն (զինն) է ընթացիկ ամսում,

$P_{io}$  -  $i$ -րդ ապրանքի բազիսային միջին արժեքն (զինն) է,

$W_{io}$  -  $i$ -րդ ապրանքի տեսակարար կշիռն է բազիսային ժամանակաշրջանում:

Հաշվարկված արտաքին առևտրի միջին արժեքի ինդեքսների շարքը կարող է լինել խիստ անկանոն ի հաշիվ առանձին ապրանքատեսակների գների կտրուկ տատանումների: Նման կարգի գնային մեծ շեղումներից խուսափելու համար օգտագործվում է ինդեքսների շարքի վերին և ստորին թույլատրելի սահմանների հարթեցման մեթոդը՝ սահմանային գործակիցների կիրառմամբ: Ինդեքսի սահմանային արժեքները հաստատվում են այնպես, որ ապահովեն գնային փոփոխության ճշգրտության անհրաժեշտ մակարդակը՝ բացառելով անհամադրելի տվյալները և հնարավոր սխալները: Ինդեքսի թույլատրելի վերին և ստորին սահմանները որոշվում են առանձին ապրանքատեսակների գների միջին կշռված քառակուսային շեղումների և դրանց հիման վրա հաշվարկված տատանման (վարիացիոն) գործակիցների օգնությամբ (միջոցով): Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Այն մշակելիս հաշվի են առնվել ԱՄՆ-ի կողմից արված առաջարկությունները, միջազգային փորձը և համարվում է ԱՄՆ-ի կողմից առաջարկված նախապատվելի տարբերակներից մեկը:

## **Աշխատանք**

- **Աշխատանքի վարձատրություն**

Վարձու աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձի վերաբերյալ ցուցանիշի աղբյուրը՝ Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազան է:

ՊԵԿ-ի վարչական ռեգիստրի ներդրման արդյունքում ապահովվել է ամսական կտրվածքով վիճակագրական միավորների ամբողջական ընդգրկվածություն՝ ներառելով **մեկ և ավելի վարձու աշխատող ունեցող բոլոր կազմակերպություններին**՝ կազմակերպաիրավական ձևից անկախ:

**Միջին ամսական անվանական աշխատավարձը** հաշվարկվում է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների ընդհանուր գումարի (ինչպես դրամական, այնպես էլ բնաիրային տեսքով) հարաբերությամբ տվյալ ժամանակահատվածի աշխատողների միջին թվաքանակին:

**Իրական աշխատավարձը** բնութագրում է դիտարկվող ժամանակահատվածում անվանական աշխատավարձի գնողունակությունը, այսինքն՝ ապրանքների և ծառայությունների այն ծավալը, որը հնարավոր է ձեռք բերել աշխատավարձով, ելնելով բազիսային ժամանակաշրջանի գներից: Ցուցանիշը հաշվարկվում է տվյալ ժամանակաշրջանի անվանական աշխատավարձի հարաբերությամբ՝ նույն ժամանակաշրջանի սպառողական գների ինդեքսին:

**Իրական աշխատավարձի ինդեքսը** հաշվարկվում է միևնույն ժամանակաշրջանի անվանական աշխատավարձի ինդեքսի (աճի տեմպի) և սպառողական գների ինդեքսի հարաբերությամբ:

- **Աշխատանքի շուկա**

Աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը տնային տնտեսություններում (S/S) իրականացվող աշխատուժի ընտրանքային հետազոտությունն է:

2018թ. հունվարից վերանայվել է աշխատանքի շուկայի վիճակագրության մեթոդաբանությունը՝ համաձայն **Աշխատանքի վիճակագիրների միջազգային 19-րդ համաժողովում (19-րդ ԱՎՄՀ) ընդունված «Աշխատանքի, զբաղվածության և աշխատուժի թերօգտագործման վիճակագրության մասին» 2013թ. հոկտեմբերին ընդունված բանաձևի առանցքային դրույթների:**

19-րդ ԱՎՄՀ ներդրման շրջանակում.

- **Ընդլայնվել է «աշխատանքային գործունեություն»** հասկացության շրջանակը, որի նպատակն է ճանաչել և չափելի դարձնել աշխատանքի բոլոր ձևերը՝ հստակ տարբերակված ըստ վճարվող և չվճարվող աշխատանքների: **Աշխատանքային գործունեության ձևերի չափման սույն մեթոդաբանության առանձնահատկություններից է նաև այն, որ մարդը ՄԻԱԺԱՄԱՆԱԿ կարող է ներգրավված լինել աշխատանքային գործունեության մի քանի ձևերում:**

- **Ընդլայնվել է «աշխատուժի թերօգտագործում» (labour underutilization)** հասկացության շրջանակը՝ բնութագրելով ոչ միայն գործազուրկ բնակչության, այլ նաև 15-75 տարեկան բնակչության մյուս խմբերի՝ զբաղվածների և աշխատուժից դուրս բնակչության, չբավարարված առաջարկը:

Աշխատուժի թերօգտագործումը (**ԱԹ**) բնութագրող ցուցանիշներն են.

1. **ԱԹ1.** Գործազրկության մակարդակ.
2. **ԱԹ2.** Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածության (time-related underemployment) և գործազրկության զուգորդված մակարդակ.
3. **ԱԹ3.** Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված մակարդակ.
4. **ԱԹ4.** Աշխատուժի թերօգտագործման ագրեգացված ցուցանիշ:

- **Նախկին** սահմանման համեմատ զբաղվածների թվաքանակից բացառվել են նրանք, ովքեր հետազոտվող շաբաթում իրենց տնտեսությունում զբաղվել են **սպրանքների արտադրությամբ սեփական վերջնական սպառման համար**, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության սպառման մեջ:

- **Վերանայվել** են որոշ ցուցանիշների անվանումները:

1. **«Տնտեսապես ակտիվ բնակչություն»** եզրույթը վերանվանվել է **«աշխատուժ»** (բնօրինակը՝ labour force): Համապատասխանաբար, **«Տնտեսական ակտիվության մակարդակ»** եզրույթը վերանվանվել է **«Աշխատուժի մասնակցության մակարդակ»** (labour force participation rate):

2. **«Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն»** եզրույթը վերանվանվել է **«աշխատուժից դուրս բնակչություն»** (population out of labour force):

**Աշխատանքային ռեսուրսները** 15-75 տարեկան աշխատուժի (զբաղված և գործազուրկ) և աշխատուժից դուրս (աշխատանք չունեցող և աշխատանք չփնտրող) բնակչության հանրագումարն են:

**Աշխատուժից դուրս բնակչության** մեջ ներառվում են անձինք, ովքեր հետազոտվող ժամանակաշրջանում **չեն աշխատել և աշխատանք չեն փնտրել**՝ չեն եղել զբաղված կամ գործազուրկ, մասնավորապես.

- առկա ուսուցմամբ և արտադրությունից կտրված սովորողները և ուսանողները.



- տնային տնտեսությանը զբաղվածները.
- երեխաներին, հիվանդ հարազատներին խնամողները.
- անձինք, ովքեր զանազան պատճառներով չեն աշխատում և աշխատանք չեն փնտրում (կենսաթոշակառուներ (տարիքային, արտոնյալ պայմաններով, հաշմանդամության), սեփականության օգտագործումից եկամուտ ստացողներ, պարտադիր ժամկետային զինծառայողներ և այլն):

**Աշխատուժի** մեջ ներառվում են զբաղվածները և գործազուրկները, ովքեր դիտարկվող ժամանակահատվածում աշխատանքի շուկայում ապահովում են աշխատուժի առաջարկը՝ ապրանքների և ծառայությունների արտադրության համար:

**Աշխատուժի մասնակցության մակարդակը** հաշվարկվում է աշխատուժի թվաքանակի տոկոսային հարաբերությամբ 15-75 տարեկան բնակչության (աշխատանքային ռեսուրսների) թվաքանակին:

**Աշխատանքային գործունեությունը (աշխատանքը)** անձի կողմից իրականացվող ցանկացած գործունեությունն է, որի նպատակն է արտադրել ապրանքներ կամ տրամադրել ծառայություններ՝ սեփական կամ այլոց սպառման համար՝ անկախ աշխատանքի ֆորմալ, ոչ ֆորմալ բնույթից կամ գործունեության օրինականությունից:

Աշխատանքի հինգ ձևերն են.

1. Զբաղվածություն՝ այլոց համար կատարվող եկամուտ հետապնդող աշխատանք.
2. **Սեփական սպառման համար** ապրանքների արտադրություն և ծառայությունների տրամադրում.

2ա. Սեփական սպառման համար ապրանքների արտադրություն (օրինակ՝ հողագործական, անասնապահական ապրանքների արտադրություն՝ անմիջապես սպառման կամ պահեստավորման համար, սեփական տան կառուցում, կապիտալ նորոգում, կահույքի պատրաստում, հագուստի կարում, գործում, վառելափայտի հավաքում, պահեստավորում և այլն).

2ա1. Մանրամթերքի բնաիրային արտադրություն (օրինակ՝ հողագործության, բուսաբուծության, անասնապահական, անասնաբուժական ապրանքների արտադրություն, ձկնորսություն, հավաքչություն և այլն).

2բ. Սեփական սպառման համար ծառայությունների տրամադրում (օրինակ՝ չվճարվող տնային գործեր, ընտանիքի ծեր / հիվանդ / մանկահասակ անդամի խնամք և այլն).

3. Զվարճատրվող աշխատանքային պրակտիկա՝ այլոց համար կատարվող չվճարվող աշխատանք՝ աշխատատանքային փորձ կամ հմտություն ձեռք բերելու նպատակով.

4. Կամավոր աշխատանք՝ այլոց համար կատարվող ոչ հարկադիր աշխատանք.

5. Այլ աշխատանք՝ այլոց համար կատարվող (օրինակ՝ աշխատանք կալանավայրում), որի գնահատման մեթոդաբանությունը դեռևս մշակման գործընթացում է:

**Զբաղված** են համարվում անձինք, ովքեր դիտարկվող ժամանակահատվածում **եկամուտ/աշխատավարձ ստանալու նպատակով գոնե մեկ ժամ** զբաղվել են ապրանքների արտադրությամբ կամ տրամադրել են ծառայություններ՝ **բացառապես այլոց սպառման համար**»:  
Զբաղվածների թվաքանակում ներառվում են նրանք, ովքեր.

- ունեցել են վարձու կամ ոչ վարձու աշխատանք, անկախ այն հանգամանքից՝ աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր կամ սեզոնային, միանգամյա կամ պատահական,

- ժամանակավորապես տարբեր պատճառներով բացակայել են աշխատանքից՝ հիվանդության, հիվանդի խնամքի, ամենամյա արձակուրդի կամ հանգստյան օրերի, աշխատավայրից դուրս ուսուցման, գործատուի նախաձեռնությամբ հարկադիր արձակուրդում (չվճարվող կամ մասնակիորեն վճարվող) գտնվելու, գործադուլի և այլ պատճառներով:

- առանց վարձատրության աշխատել են տնային տնտեսությանը կամ ազգականին (բարեկամին) պատկանող շուկայական ուղղվածությամբ ընտանեկան կազմակերպությունում՝ օգնելու, օժանդակելու նպատակով:

Ըստ իրենց կարգավիճակի զբաղվածները դասակարգվում են վարձու և ոչ վարձու աշխատողների:

**Վարձու աշխատող են** համարվում անձինք, ովքեր աշխատում են գործատուի հետ կնքած պայմանագրի, աշխատանքի ընդունվելու հրամանի կամ ձեռք բերված որոշակի գրավոր կամ բանավոր համաձայնության հիման վրա և ստանում են դրամական և (կամ) բնաիրային փոխհատուցում՝ աշխատավարձ:

**Ոչ վարձու** աշխատող են համարվում անձինք, ովքեր ինքնուրույնաբար են իրենց ապահովում եկամտաբեր տնտեսական գործունեությամբ (գործատու, ինքնազբաղված, ընտանիքի առանց վարձատրության աշխատող անդամ, արտադրական, սպառողական կոոպերատիվի անդամ):

**Զբաղվածության մակարդակը** հաշվարկվում է զբաղվածների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ համապատասխան տարիքային խմբի բնակչության (աշխատանքային ռեսուրսների) թվաքանակին:

**Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղված** են համարվում զբաղված անձինք, ովքեր միաժամանակ բավարարել են հետևյալ պայմաններին.

- Հետազոտվող շաբաթում վճարման պայմանով ցանկացել են և պատրաստ են եղել աշխատել լրացուցիչ ժամեր՝ իրենց ընթացիկ աշխատանքում և/կամ՝ լրացուցիչ այլ աշխատանք (ներ)ում.

- Հետազոտվող շաբաթում աշխատած ժամերը բոլոր աշխատանքներում եղել է սովորաբար աշխատած ժամերից պակաս: Ընդ որում, աշխատաժամանակի սահմանված շեմ ընդունվում է սովորաբար աշխատած ժամերի շաբաթական մեղիան միավորը՝ 36 ժամ:

**Թերզբաղվածության մակարդակը** հաշվարկվում է թերզբաղվածների և զբաղվածների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ:

**Ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածության** վերլուծությունը խարսխված է աշխատատեղերի քանակի (ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ (երկրորդ)) և ոչ թե զբաղված անձանց թվաքանակի վրա: Հետևաբար, ընդամենը զբաղվածությունն ըստ աշխատանքի բնույթի (ֆորմալ, ոչ ֆորմալ) կունենա ավելի մեծ քանակական արտահայտություն, քան զբաղվածների թվաքանակը:

**Ոչ ֆորմալ զբաղվածությունը** դիտարկվող ժամանակահատվածում ոչ ֆորմալ աշխատատեղերի հանրագումարն է, անկախ այն հանգամանքից եղել են դրանք ֆորմալ, թե ոչ ֆորմալ հատվածի կազմակերպություններում կամ տնային տնտեսություններում:

Ոչ ֆորմալ զբաղվածության մեջ ներառվում են. (ա) գործատուի հետ բանավոր համաձայնությամբ վարձու աշխատողները (այդ թվում՝ տնային տնտեսությունում վճարովի աշխատողները), (բ) չգրանցված կազմակերպությունների սեփականատեր գործատուները և ինքնազբաղվածները, (գ) առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները, (դ) չգրանցված արտադրական կոդպերատիվների անդամները:

**Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը** ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցողների թվաքանակի (ոչ ֆորմալ աշխատատեղերի) տեսակարար կշիռն է ընդամենը զբաղվածության (ընդամենը աշխատատեղերի) մեջ կամ ոչ ֆորմալ աշխատատեղերի և ընդամենը աշխատատեղերի տոկոսային հարաբերությունն է:

#### **Գործազուրկներ**

• **Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից առաջարկվող ստանդարտ սահմանման համաձայն գործազուրկ են** համարվում անձինք, ովքեր հետազոտվող ժամանակաշրջանում միաժամանակ բավարարել են հետևյալ երեք պայմաններին.

- չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք.

- ակտիվորեն փնտրել են աշխատանք՝ օգտագործելով ցանկացած միջոց, այսինքն՝ դիմել են զբաղվածության պետական և (կամ) մասնավոր գործակալություն, աշխատանք են փնտրել ծանոթների, բարեկամների, հայտարարությունների միջոցով կամ ցանկացած այլ եղանակով՝ հետազոտությանը նախորդող վերջին 4 շաբաթվա ընթացքում.

- պատրաստ են եղել անմիջապես (այսինքն՝ առաջիկա 2 շաբաթվա ընթացքում) անցնել աշխատանքի:

Գործազուրկ են համարվում նաև անձինք, ովքեր հետազոտությանը նախորդող վերջին 4 շաբաթվա ընթացքում չեն ունեցել և չեն փնտրել աշխատանք, որովհետև արդեն գտել են և կսկսեն աշխատել առաջիկա 2 շաբաթվա ընթացքում:

**Գործազրկության մակարդակը** հաշվարկվում է գործազուրկների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ աշխատուժի թվաքանակին:

• **Զբաղվածության պետական գործակալությունում գրանցված գործազուրկ** են համարվում տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած՝ աշխատանք փնտրող և «Զբաղվածության մասին» օրենքով նախատեսված գործունեության որևէ տեսակով չզբաղված անձինք, ովքեր աշխատանք գտնելու նպատակով հաշվառված են զբաղվածության պետական գործակալությունում, պատրաստակամ են անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ:

**Գործազրկության (աշխատանք փնտրելու) միջին տևողությունն** այն ժամանակահատվածն է, որի ընթացքում քաղաքացին փնտրել է աշխատանք և հաշվարկվում է որպես կշռված միջին մեծություն գործազուրկների դիտարկվող կազմի համար:

**Աշխատանք փնտրող** են համարվում, ըստ ՀՀ գործող օրենսդրության, 16 տարին լրացած այն գործունակ անձինք, ովքեր, անկախ զբաղված լինելու հանգամանքից, աշխատանքի տեղավորման նպատակով դիմել են զբաղվածության պետական գործակալություն:

**Գործատուի հայտարարած աշխատուժի պահանջարկը** թափուր աշխատատեղերի (պահանջվող աշխատողների) քանակն է, որի վերաբերյալ գործատուն հայտնում է զբաղվածության պետական գործակալությանը:

*Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը* հաշվարկվում է զբաղվածության պետական ծառայությունում հաշվառված աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակի և գործատուների կողմից նույն գործակալությանը հայտնած թափուր աշխատատեղերի քանակի հարաբերությամբ:

### **Ֆինանսներ և դրամաշրջանառություն**

*ՀՀ համախմբված բյուջեն* կազմում են պետական բյուջեն և համայնքների բյուջեները, որի մուտքերն օրենքով պետական և համայնքների բյուջեներին ամրագրված աղբյուրներից ձևավորվող (ձևավորված) դրամական միջոցների (առանց միջբյուջետային փոխանցումների գծով մուտքերի), իսկ ելքերը օրենքով սահմանված ուղղություններով ծախսվող (ծախսված) դրամական միջոցների (առանց միջբյուջետային փոխանցումների գծով ելքերի) համապատասխան հանրագումարներն են:

*ՀՀ բյուջետային համակարգը* հետևյալ երկու մակարդակի բյուջեների ամբողջությունն է՝

ա) առաջին մակարդակ՝ պետական բյուջե.

բ) երկրորդ մակարդակ՝ համայնքների բյուջեներ:

*Պետական և համայնքի բյուջեները* պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են:

*Բյուջետային եկամուտներն* անվերադարձ կարգով օրենսդրությանը համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դրամական միջոցներն են:

*Բյուջետային ծախսերը* պետության և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների և գործառույթների ֆինանսական ապահովմանն ուղղված դրամական միջոցներն են:

*Բյուջետային մուտքերը* ներառում են տվյալ բյուջեի համար օրենքով սահմանված եկամուտները, բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից, տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների վերադարձից ստացվող, ինչպես նաև փոխառու և ներգրավված այլ դրամական միջոցները:

*Բյուջետային ելքերը* ներառում են բյուջետային ծախսերը (ընթացիկ և կապիտալ ծախսեր), ինչպես նաև բյուջետային վարկերի ու փոխատվությունների տրամադրումը և ներգրավված փոխառու միջոցների մարումները:

*Բյուջետային հատկացումները* բյուջեն հաստատող իրավական ակտով բյուջետային միջոցներ ստացողի գծով նախատեսված բյուջետային միջոցներն են:

*Կապիտալ ծախսերը* (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը) ներառում են պետական և համայնքային նշանակության ծրագրերի շրջանակներում նախատեսվող այն ծախսերը, որոնք հանգեցնում են հիմնական միջոցների, պետական ռազմավարական կամ համայնքային նշանակության պահուստների ստեղծման նպատակով ապրանքային արժեքների ձեռքբերմանը կամ դրանց արժեքի ավելացմանը:

*Ընթացիկ ծախսերը* ներառում են այն ծախսերը, որոնք ընդգրկված չեն կապիտալ ծախսերում:

*Բյուջեների պակասուրդը (դեֆիցիտը) և հավելուրդը.*

- Բյուջեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումը կազմում է բյուջեների հավելուրդը:

- Բյուջեների եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումը կազմում է բյուջեների դեֆիցիտը (պակասուրդը):

**Պետական բյուջեի պակասուրդը** ֆինանսավորվում է ներքին և արտաքին աղբյուրներից ստացվող փոխառու միջոցների, պետական բյուջեից տրամադրված փոխառու միջոցների վերադարձից ստացվող գուտ միջոցների, ինչպես նաև այդ բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

**Պետական բյուջեի եկամուտների աղբյուրներն են՝**

- ա) հարկային եկամուտները.
- բ) պետական տուրքերը.
- գ) պարտադիր սոցիալական ապահովության վճարները.
- դ) պաշտոնական դրամաշնորհները.
- ե) այլ եկամուտներ:

**Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն են՝**

ա) պետությանը պատկանող հիմնական միջոցների (հիմնական ֆոնդերի) օտարումից մուտքերը (այդ թվում՝ լուծարված պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց՝ լուծարումից հետո մնացած գույքի օտարումից պետական մասնակցության չափին համապատասխան մուտքերը).

բ) բարձրարժեք ակտիվների օտարումից մուտքերը.

գ) պետության պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների իրացումից մուտքերը.

դ) պետական սեփականություն համարվող չարտադրված ակտիվների՝ հողի և ոչ նյութական չարտադրված ակտիվների օտարումից մուտքերը:

**Փողի բազան** ներառում է Կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամը, Կենտրոնական բանկում առևտրային բանկերի պարտադիր պահուստները և Կենտրոնական բանկում ոչ բանկային կազմակերպությունների ավանդները (բացառությամբ կառավարության ավանդների): Փողի բազան հավասար է նաև Կենտրոնական բանկի գուտ արտաքին և գուտ ներքին ակտիվների հանրագումարին:

**Փողի զանգվածը** ներառում է շրջանառությունում կանխիկ դրամը և ռեզիդենտ տնտեսության (բնակչության, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների) դրամով և արտարժույթով բոլոր ավանդները բանկային համակարգում:

**Ցայահանջ ավանդները** բանկերի պահպանմանը հանձնված և որևէ գործարք իրականացնելիս հանվող միջոցներն են:

**Ժամկետային ավանդները** բանկերում որոշակի ժամկետով ձևակերպվող ավանդներն են:

**Վարկային ներդրումները** բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի գծով մնացորդներն են: Վարկային ներդրումները բաժանվում են կարճաժամկետ (տրամադրված մեկ տարուց պակաս ժամկետով) և երկարաժամկետ (մեկ տարուց ավել ժամկետով):

## **Արտաքին առևտուր**

**Արտաքին և փոխադարձ առևտրի վերաբերյալ (արտաքին առևտրի շրջանառություն, արտահանում, ներմուծում, առևտրային հաշվեկշիռ)** ցուցանիշների հաշվարկման համար հիմք են հանդիսացել բեռնամաքսային հայտարարագրերի, ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի և «Ապրանքների փոխադրման հաշվառման ձև»-ի տվյալները՝ ստացված ՀՀ պետական

եկամուտների կոմիտեից, ինչպես նաև բնական գազի արտահանման ու ներմուծման և էլեկտրաէներգիայի արտահանման ու ներմուծման տվյալները՝ ստացված Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից և էներգետիկ կազմակերպություններից:

**Արտահանում:** Ապրանքների արտահանումն այլ երկրների տնտեսական տարածքներ ազատ շրջանառության համար երկրի սահմանով դուրս բերված ապրանքներն են, որոնք նվազեցնում են երկրի նյութական ռեսուրսների պաշարները: Արտահանման ծավալում ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները: Արտահանված ապրանքների արժեքները հաշվարկված են ՖՕԲ գնով՝ ապրանքի արժեքը մինչև ՀՀ սահման:

**Ներմուծում:** Ապրանքների ներմուծումն երկրի տնտեսական տարածք ազատ շրջանառության համար ներս բերված ապրանքներն են, որոնք ավելացնում են երկրի նյութական ռեսուրսների պաշարները: Ներմուծման ծավալում ընդգրկված են արտասահմանյան ապրանքները, որոնք ներմուծվել են հանրապետություն սպառման և վերաարտահանման համար: Ներմուծված ապրանքների արժեքները հաշվարկված են ՄԻՖ գնով՝ ապրանքի արժեքը մինչև ՀՀ սահման, ներառյալ ապահովագրության և տրանսպորտային փոխադրության ծախսերը:

**Արտաքին առևտրի շրջանառություն:** Արտահանման և ներմուծման ծավալների հանրագումարն է:

**Արտաքին առևտրի հաշվեկշիռ:** Արտահանման և ներմուծման ծավալների տարբերությունն է:

**Գիրառվող համակարգ:** Արտաքին առևտրի վիճակագրության վարման համար կիրառվում է արտաքին առևտրի ընդհանուր համակարգ, երբ երկրի վիճակագրական տարածքը համընկնում է տնտեսական տարածքին:

**Գործընկեր երկիր:** Գործընկեր երկրի բնորոշման համար արտահանման ժամանակ կիրառվում է ապրանքի վերջին հայտնի նշանակման երկրի, իսկ ներմուծման ժամանակ՝ ապրանքի ծագման երկրի և ապրանքն առաքող երկրի հատկանիշը:

### **Վճարային հաշվեկշիռ**

**ՀՀ վճարային հաշվեկշիռը** վիճակագրական հաշվետվություն է, որում համակարգված տեսքով արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ: Տնտեսական բնույթի գործառնությունները, որոնք կատարվում են ՀՀ ռեզիդենտների<sup>1</sup> և ՀՀ ոչ ռեզիդենտների միջև, իրականացվում են ապրանքների և ծառայությունների, սկզբնական եկամուտների, երկրորդային եկամուտների, ինչպես նաև ֆինանսական պահանջների և պարտավորությունների տեսքով:

**ՀՀ վճարային հաշվեկշիռը կազմված է 3 հիմնական հաշիվներից՝** ընթացիկ հաշիվ, կապիտալի հաշիվ և ֆինանսական հաշիվ: Ընթացիկ հաշիվում գրանցվում են ապրանքների, ծառայությունների, սկզբնական և երկրորդային եկամուտների հետ կատարված գործառնությունները, կապիտալ հաշիվում՝ ոչ ֆինանսական ակտիվների և կապիտալ

<sup>1</sup>Ըստ ԱՄՆ վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության, ՀՀ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, տնային տնտեսությունը, իրավաբանական անձը կամ ՀՀ տարածքում գործող որևէ տնտեսավարող սուբյեկտ, որի մշտական գտնվելու վայրը (ֆիզիկական անձանց համար բնակության վայրը) կամ տնտեսական շահերի կենտրոնը (ֆիզիկական անձանց համար՝ կենսական շահերի կենտրոնը) հանդիսանում է ՀՀ-ն:

տրանսֆերտների, իսկ ֆինասական հաշվում՝ ձեռքբերված և դուրս գրված գուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հետ գործառնությունները:

Մեթոդաբանական առումով, ընթացիկ հաշվի և կապիտալ հաշվի մնացորդը, բացարձակ մեծությամբ, հակառակ նշանով պետք է հավասար լինի ֆինանսական հաշվի մնացորդին, սակայն իրականում միշտ առաջանում են տարբերություններ, որը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել սխալների և բացթողումների հոդված:

**Ֆինանսական հաշիվը** կազմված է 5 հոդվածներից՝ օտարերկրյա ուղղակի, պորտֆելային, այլ ներդրումներից, ֆինանսական ածանցյալներից և պահուստային ակտիվներից: Վճարային հաշվեկշռում օտարերկրյա ներդրումները բերված են գուտ հիմքով, այսինքն օտարերկրյա ներդրումների հոսքեր հանած վճարումներ (ուղղակի ներդրումների դեպքում՝ նաև ներֆիրմային շարժ): Վճարային հաշվեկշռում արտացոլված օտարերկրյա ներդրումները ներառում են ինչպես իրական հատվածում կատարված ներդրումները, այնպես էլ բանկային (ներառյալ՝ Կենտրոնական բանկ) և պետական կառավարման համակարգերով իրականացված ներդրումները:

**Օտարերկրյա ներդրում** է համարվում գույքի ցանկացած տեսակ (այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ (ոչ նյութական ակտիվներ), որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է ՀՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով: Օտարերկրյա ներդրումները ֆինանսական ներդրումներ են (ֆինանսական միջոցների հոսքեր) և ըստ տեսակի լինում են ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումների տեսքով:

**Ուղղակի ներդրումը** մի երկրի ռեզիդենտի(ների) կողմից այլ երկրի ռեզիդենտ կազմակերպության կապիտալում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կամ բաժնեմասի 10% և ավելի ձեռքբերումն է, ինչպես նաև այդ ներդրողների ու դրանց հետ կապված կազմակերպությունների հետ ֆինանսական բոլոր պահանջներն ու պարտավորությունները:

**Ուղղակի ներդրումները լինում են** կանոնադրական և էմիսիոն կապիտալի, ուղղակի ներդրողի մասնաբաժնի կազմակերպության սեփական կապիտալի այլ տարրերի և պարտքային գործիքների տեսքով:

**Պորտֆելային ներդրումն** որևէ կազմակերպության օտարերկրյա ներդրումներն են՝ մինչև 10% ձայնի իրավունք տվող բաժնետոմսերում, ինչպես նաև ներդրումները շրջանառելի պարտքային արժեթղթերում (պարտատոմսեր, պարտամուրհակներ, դրամի շուկայի գործիքներ, այլ պարտքային արժեթղթեր): Պորտֆելային ներդրումները լինում են կապիտալի արժեթղթերի՝ գլխավորապես բաժնետոմսերի (բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկվող) և պարտքի արժեթղթերի տեսքով:

**Այլ ներդրումը** ներդրումների այն մասն է, որը ներառում է բոլոր տեսակի ֆինանսական գործառնությունները, որոնք չեն ընդգրկվել ուղղակի և պորտֆելային ներդրումներում: Այլ ներդրումները լինում են վարկերի և փոխառությունների (բացի օտարերկրյա ներդրումով կազմակերպության ստացածն իր անմիջական ներդրող կազմակերպությունից, որն ուղղակի ներդրում է), ապրանքների և ծառայությունների դիմաց վճարվելիք/ստացվելիք գումարների, ստացված և տրված կանխավճարների տեսքով:

Օտարերկրյա ներդրումների վիճակագրությունն իրականացվում է հաշվետու ժամանակահատվածում կատարված գուտ հոսքերի, հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ համախառն հոսքերի, հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ մաքուր պաշարների տեսքով:

**Համախառն հոսքերին** ընդգրկում են հաշվետու ժամանակահատվածի վերջին միայն գործառնության արդյունքում իրականացված ներդրումների ծավալների հանրագումարը (առանց պարտավորությունների գծով մարումների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների՝ արտակարգ իրավիճակների, մեխանիկական սխալի և կազմակերպության ուղղակի լուծարման արդյունքում իրականացված փոփոխությունների):

**Մաքուր պաշարներն** ընդգրկում են հաշվետու ժամանակահատվածի վերջին ինչպես գործառնության արդյունքում իրականացված ներդրումների ծավալների հանրագումարը, այնպես էլ պարտավորությունների գծով մարումները, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունները՝ արտակարգ իրավիճակների, մեխանիկական սխալի և կազմակերպության ուղղակի լուծարման արդյունքում իրականացված փոփոխությունները:

### **Միջազգային ներդրումային դիրք**

**ՀՀ միջազգային ներդրումային դիրքը (ՀՀ ՄՆԴ)** վիճակագրական հաշվետվություն է, որտեղ արտացոլվում են երկրի ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարների մակարդակը որևէ ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ: Միաժամանակ, հաշվետվության մեջ արտացոլվում են այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվել են ուսումնասիրվող ժամանակահատվածում ֆինանսական գործառնությունների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների շնորհիվ:

**ՀՀ ՄՆԴ-ն** սերտորեն կապված է ՀՀ վճարային հաշվեկշռի հետ: ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվում գրանցվում են բոլոր գործառնությունները, որոնք կապված են արտաքին ակտիվների և պարտավորությունների հետ: Բնականաբար, այդ գործառնություններն իրենց ազդեցությունն են ունենում ՀՀ ՄՆԴ-ում արտացոլված արտաքին ակտիվների ու պարտավորությունների պաշարների վրա: Միաժամանակ, կան նաև այլ գործոններ (գների, փոխարժեքի փոփոխություններ), որոնք ժամանակի ընթացքում հանգեցնում են ակտիվների և պարտավորությունների արժեքի փոփոխության: Այդ փոփոխությունները նույնպես արտացոլվում են ՀՀ ՄՆԴ-ում:

**ՀՀ ՄՆԴ-ն** արտացոլում է տնտեսության արտաքին ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարները, իսկ ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշիվը՝ այդ ակտիվների ու պարտավորությունների հետ կատարված գործառնությունները (հոսքերը կոնկրետ ժամանակահատվածում):

### **Արտաքին պարտք**

**Համախառն արտաքին պարտքը** ժամանակաշրջանի ցանկացած պահին փաստացի ընթացիկ և ոչնչով չպայմանավորված պարտավորությունների չվճարված գումարն է, որը պահանջում է հիմնական պարտքի և (կամ) տոկոսների վճարումներ հետագայում ժամանակի որևէ պահին և իրենից ներկայացնում է ռեզիդենտների պարտավորությունները ոչ ռեզիդենտների նկատմամբ:



Արտաքին պարտքը, որպես կանոն, առաջանում է պայմանագրային հարաբերությունների հիման վրա, ըստ որի մեկ կառուցվածքային միավորը /դեբիտորը/ պարտավորություններ է ստանձնում մեկ այլ կառուցվածքային միավորի /կրեդիտորի/ հանդեպ վերադարձնել հիմնական գումարը տոկոսներով կամ առանց տոկոսների, կամ էլ վճարել տոկոսներն առանց հիմնական գումարը վերադարձնելու:

Արտաքին պարտքի գործիքների թվին են դասվում պարտքի գործիքները, վարկերը, առևտրային վարկերը, կանխիկ դրամական միջոցները և ավանդները և այլ պարտքային պարտավորությունները:

Պարտքի գործիքներ չեն համարվում ֆինանսական գործիքների ֆինանսական ածանցյալները, կապիտալի մասնակցության արժեթղթերը, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների տարր հանդիսացող բաժնետիրական կապիտալը և վերաներդրված շահույթը (եկամուտը):

Արտաքին պարտքը հաշվարկվում է ըստ տնտեսության հատվածների, որոնք համաձայն արտաքին պարտքի մեթոդաբանության դասակարգվում են (1) պետական կառավարման մարմինների, (2) կենտրոնական բանկի, (3) ավանդային կազմակերպությունների, բացի Կենտրոնական բանկից, (4) այլ հատվածների (տնտեսության տարբեր հատվածների կազմակերպությունների կողմից ստացված ուղղակի ներդրումները բերվում են առանձին՝ 5-րդ բաժնով, առանց տնտեսության հատվածների բաժանման): Ընդ որում, ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի երաշխիքներով մասնավոր հատվածի կազմակերպությունների ստացված վարկերն ըստ արտաքին պարտքի մեթոդաբանության ներառված են տնտեսության «այլ հատվածների» պարտքի ցուցանիշում:

Արտաքին պարտքի ցուցանիշը ներառում է ոչ միայն հիմնական գումարը, այլ նաև ժամանակահատվածի վերջի դրությամբ հաշվարկված, բայց դեռևս չվճարված տոկոսավճարները:

### **Մարդահամար և ժողովրդագրություն**

Յուրաքանչյուր վարչական միավորի **մշտական բնակչության** թվաքանակի ցուցանիշը ձևավորվել է ՀՀ 2011թ. մարդահամարի ժամանակ տվյալ տարածքում մշտապես (սովորաբար) բնակվող ու հաշվառման պահին ներկա և *ժամանակավոր բացակա* հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակների հանրագումարից:

**Ժամանակավոր բացակա** բնակչության թվաքանակի ցուցանիշում ներառվել են տվյալ բնակավայրում՝ քաղաք, գյուղ, տուն (շինություն), մշտապես (սովորաբար) բնակվող, սակայն մարդահամարի հաշվառման պահի դրությամբ, տվյալ բնակավայրի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս՝ 1 տարուց պակաս ժամկետով բացակայող անձանց թվաքանակի ցուցանիշները (տես՝ «2010թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի ուղեցույցներ» մշակված Եվրոստատի հետ համագործակցությամբ, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ, Նյու Յորք և Ժնև, 2006, գլուխ III «Հաշվառման ենթակա», կետ 167 «Ժամանակավոր բացակայողներ», էջ 56 (ռուսերեն տարբերակ), էջ 37 (անգլերեն տարբերակ)):

**Բնակչության բնական շարժը**<sup>1</sup> ծնվածների և մահացածների համակցության վերաբերյալ ընդհանրացված ցուցանիշների անվանումն է, որոնցով ձևավորվում է բնական ճանապարհով բնակչության թվաքանակի փոփոխությունը: Բնակչության բնական շարժի ցուցանիշներին են վերագրվում նաև ամուսնություններն ու ամուսնալուծությունները, որոնց հաշվարկները թեև իրականացվում են նույն եղանակով, սակայն դրանք բնակչության թվաքանակի ցուցանիշի վրա ուղղակի ազդեցություն չեն ունենում:

**Ծնունդների, մահերի, ամուսնությունների, ամուսնալուծությունների** վերաբերյալ ամենամսյա տեղեկությունները ստացվում են Քաղաքացիական կացության ակտերի ռեգիստրում ձևավորված վիճակագրական հաշվետվություններով՝ ըստ միասնական էլեկտրոնային գրանցամատյանում օրենքով սահմանված կարգով կատարված ակտային գրանցումների:

Ծնվածների թվաքանակում ներառված են միայն կենդանի ծնված երեխաները: Ընդ որում, 2005թ. հոկտեմբերի 16-ից կիրառության մեջ են դրվել «Կենդանածնության, մեռելածնության և պերինատալ շրջանի» ԱՀԿ սահմանումները՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ վերանայմանը համապատասխան (ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 16-ի թիվ 949-Ն որոշում):

**Կենդանածնություն** է համարվում մոր օրգանիզմից բեղմնավորման արգասիքի լրիվ արտամղումը կամ դուրսբերումն անկախ հղիության ժամկետից, որից հետո պտուղը շնչում կամ ցուցաբերում է կյանքի որևէ այլ նշան՝ ինչպիսիք են սրտխփոցը, պորտալարի անոթազարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները, անկախ նրանից, թե արդյոք կտրված է պորտալարը, և (կամ) անջատված է ընկերքը: Այսպիսի ծննդի յուրաքանչյուր արգասիք համարվում է կենդանածին: ՔԿԱԳ տարածքային մարմիններում գրանցման են ենթակա 500 գ և ավելի քաշով կենդանածնության բոլոր դեպքերը:

**Մեռելածնություն** է համարվում մոր օրգանիզմից բեղմնավորման արգասիքի լրիվ արտամղումը կամ դուրս բերումը, որից հետո պտուղը չի շնչում կամ չի ցուցաբերում կյանքի որևէ այլ նշան՝ ինչպիսիք են սրտի խփոցը, պորտալարի անոթազարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները:

ՔԿԱԳ մարմիններում գրանցվում և պերինատալ մահացության ցուցանիշում ներառվում են 500 գ և ավելի քաշով (22 շաբաթ և ավելի հղիության ժամկետով) մեռելածնության դեպքերը:

**Պերինատալ (շուրջծննդյան) շրջանը** սկսվում է պտղի ներարգանդային կյանքի 22 լրացած շաբաթից (154 օրից), երբ ծննդյան քաշը նորմայում 500 գրամ է և ավարտվում է ծննդից 7 լրիվ օր (168 ժամ) հետո:

**Մահվան պատճառների մասին** տեղեկատվության աղբյուր է հանդիսանում մահվան մասին բժշկի կողմից կազմված մահվան բժշկական վկայագրերում՝ հիվանդության, վնասվածքների, թունավորումների և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքների վերաբերյալ գրանցումները, որոնք մահվան պատճառ են հանդիսացել, ինչպես նաև դրանց համապատասխանող թվային ծածկագրերը՝ ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հիվանդությունների միջազգային դասակարգչի X-րդ վերանայման (ՀՄԴ-10)<sup>1</sup>:

<sup>1</sup>Բժիշկների կողմից մահվան պատճառների թվային ծածկագրումը մասնակիորեն իրականացվել է 2017թ-ին, իսկ ամբողջապես՝ 2018թ-ի հունվարից:

**Ծնելիության/մահացության ընդհանուր գործակիցները**՝ հաշվետու ժամանակաշրջանում, համապատասխանաբար, գրանցված ծնվածների (կենդանի) թվաքանակի/մահվան դեպքերի և հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված մշտական բնակչության թվաքանակի միջին ցուցանիշի հարաբերություններն են, որոնք հաշվարկվում են 1 000 բնակչի հաշվով:

**Մեռելաձնության գործակիցը**՝ հաշվետու ժամանակաշրջանում գրանցված մեռելաձնության դեպքերի հարաբերությունն է կենդանի ծնվածների և մեռելաձիների հանրագումարի ցուցանիշին: Հաշվարկվում է 1 000 կենդանի ծնվածի և մեռելաձնի հաշվով:

**Բնական հավելածի գործակիցը**՝ ծնելիության և մահացության ընդհանուր գործակիցների տարբերությունն է:

**Ամուսնության/ամուսնալուծության ընդհանուր գործակիցները**՝ հաշվետու ժամանակաշրջանում, համապատասխանաբար, գրանցված ամուսնությունների/ամուսնալուծությունների քանակի և տվյալ ժամանակաշրջանի համար հաշվարկված մշտական բնակչության թվաքանակի միջին ցուցանիշի հարաբերություններն են և հաշվարկվում են 1 000 բնակչի հաշվով:

Բոլոր գործակիցների հաշվարկներն իրականացվում են դրանք համապատասխանեցնելով տարվան հավասարազոր հաշվարկի:

**Մանկական մահացության գործակիցը**, եռամսյակային կտրվածքով՝ մինչև 1 տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նույն ժամանակահատվածում կենդանի ծնվածների թվաքանակին: Տարեկան կտրվածքով (տվյալների մեքենայական մշակման արդյունքով) այն հաշվարկվում է որպես 2 բաղադրիչների գումար: Դրանցից առաջինն այդ տարում ծնվածների սերնդից (որի համար հաշվարկվում է գործակիցը) մինչև մեկ տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նույն տարում կենդանի ծնվածների ընդհանուր թվաքանակին, իսկ երկրորդը՝ նախորդ տարում ծնվածների սերնդից մինչև 1 տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նախորդ տարում կենդանի ծնվածների ընդհանուր թվաքանակին: Հաշվարկվում է 1 000 կենդանի ծնվածի հաշվով:

**Երեխաների մահացության գործակիցը (մինչև 5 տարեկան)**՝ հաշվետու ժամանակաշրջանում մինչև 5 տարեկան հասակում մահացած երեխաների թվաքանակի ցուցանիշի հարաբերությունն է կենդանի ծնվածների թվաքանակի ցուցանիշին: Հաշվարկվում է 1 000 կենդանի ծնվածի հաշվով:

**Մայրական մահացության գործակիցը**՝ հաշվետու ժամանակաշրջանում հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում արձանագրված մահվան դեպքերի հարաբերությունն է կենդանի ծնվածների թվաքանակի ցուցանիշին: Հաշվարկվում է 100 000 կենդանի ծնվածի հաշվով:

**Բնակչության տեղաշարժերի վարչական հաշվառման տվյալների սկզբնաղբյուրը** 22 ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տրամադրված՝ բնակչության հաշվառման և դուրս գրման վարչական գրանցումներով ձևավորված էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանների տվյալների գրանցումներն են: Մշտական բնակչության հաշվարկի համար բնակչության տեղաշարժերի (միգրացիայի) տվյալները ենթարկվում են վերագնա-

հատման (ճշգրտման) հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա՝ Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով ձևավորված, միգրացիոն գործընթացներն արտացոլող ամփոփ տվյալների հիման վրա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվառման կանգնելու և հաշվառումից դուրս գրվելու գործառույթներն ուղղակիորեն կախված են քաղաքացիների կամքից, և որպես դրա հետևանք, այդ կարգի վարչական գրանցումները միգրացիոն տեղաշարժերի ամբողջական պատկերը չեն արտացոլում:

Ըստ վերագնահատված ցուցանիշների.

**Իմիգրանտ (ներգադրյալ)** են համարվում այն անձինք, ովքեր Հայաստան են ժամանել բնակություն հաստատելու նպատակով:

**Էմիգրանտ (արտագաղթյալ)** են համարվում այն անձինք, ովքեր մեկնել են Հայաստանից մեկ այլ երկիր՝ բնակություն հաստատելու նպատակով:

**Միգրացիայի մնացորդը** հաշվարկվում է որպես իմիգրանտների և էմիգրանտների ցուցանիշների տարբերություն:

### Առողջապահություն

**Վարակիչ և տարափոխիկ հիվանդություններ:** Այլ սալմոնելոզային ինֆեկցիաներ՝ ներառում է տոկսիկոինֆեկցիոն հիվանդությունները՝ հարուցված տարբեր սերոտիպի սալմոնելոզներով (սալմոնելոզային գաստրոէնտերիտ և սալմոնելոզի գեներալիզացված ձևերը): Էնտերիտներ, կոլիտներ, գաստրոէնտերիտներ, սննդային տոկսիկոինֆեկցիաներ՝ հարուցված հաստատված հարուցիչներով՝ ներառում է հաստատված բակտերիալ հարուցիչներով էնտերիտները, կոլիտները, գաստրոէնտերիտները, ադենովիրուսներով և էնտերովիրուսներով հարուցված էնտերիտները, ինչպես նաև այլ վիրուսային էնտերիտները:

**Շճադրական:** Մարդու իմունային անբավարարության վարակի նկատմամբ իմունոֆերմենտային անալիզի միջոցով կատարված հետազոտություններից երկուսը եղել են դրական:

### Իրավախախտումներ

**Հանցագործություններ:** Ծանր հանցագործություններ համարվում են՝ հանրորեն առավել վտանգավորություն ներկայացնող դիտավորյալ արարքները: Հանցագործությունը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները, ցանկացել է դրանք կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը: Տնտեսական հանցագործություններ են երկրի տնտեսության ոլորտում կատարվող հանրորեն վտանգավոր արարքները, որոնք նախատեսված են օրենքով:

**Հարկային հանցագործություններ:** Հարկային հանցագործությունները՝ տնտեսական բնույթի հանցագործություններ են, որոնք որակավորվում են ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով:

**Մաքսային հանցագործություններ:** Խոշոր չափի մաքսանենգություն համարվում է 4 000 ամերիկյան դոլարից բարձր գումար ներկայացնող մաքսանենգությունը:

**Դատական ակտ**՝ առաջին ատյանի վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի կողմից կայացրած դատարանի որոշումներն են, դատարանի վճիռներն են և դատավճիռներն են:

**Հարկադիր կատարում**՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով նախատեսված կատարողական գործողություններն են:

**Փաստացի** բռնագանձված գումար՝ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով նախատեսված բռնագանձման ենթակա գումարից փաստացի կատարված բռնագանձում:

**Կատարողական վարույթով պետտուրքի բռնագանձում**՝ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով նախատեսված ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուրք, որն ենթակա է պարտադիր բռնագանձման:

### **Հաշմանդամություն**

**Հաշմանդամությունը**՝ օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումների հետևանքով առաջացած սոցիալական անբավարարություն է, որը հանգեցնում է անձի կենսագործունեության սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության:

### **Ստանդարտացում**

**Ստանդարտացումն**՝ իրականում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ համընդհանուր և բազմակի կիրառման համար դրույթների սահմանման միջոցով որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանին հասնելու ուղղված գործունեություն է:

**Սերտիֆիկացում**՝ համապատասխանության հավաստման ընթացակարգ, որի արդյունքով սերտիֆիկացման մարմինը գրավոր հավաստիացնում է արտադրանքի կամ ծառայության համապատասխանությունը նորմատիվ պահանջներին:

**Հավատարմագրումն**՝ ընթացակարգ է, որի միջոցով հավատարմագրման խորհուրդը պաշտոնապես ճանաչում է իրավաբանական անձի իրավասությունը՝ համապատասխանության հավաստման որոշակի ոլորտում աշխատանքներ կատարելու համար, ինչպես նաև պաշտոնապես ճանաչում է արտադրանք արտադրողից (վաճառողից) կամ ծառայություն մատուցողից այդ իրավաբանական անձի անկախությունը:

**Սերտիֆիկացման մարմինը** որոշակի արտադրանքի կամ ծառայության համապատասխանության հավաստման աշխատանքների կատարման համար հավատարմագրված իրավաբանական անձն է:

**Փորձարկման լաբորատորիան** որոշակի փորձարկումներ իրականացնելու համար հավատարմագրված իրավաբանական անձն է:

### **Բնապահպանություն**

**Բնապահպանական վճարը** բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարն է:

**Բնօգտագործման վճարը** պետական սեփականություն համարվող բնական պաշարների

արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց ՀՀ պետական բյուջե վճարվող վճարն է:

### **Գիտատեխնիկական աշխատանքներ**

**Գիտատեխնիկական աշխատանքներ** են գիտական հետազոտությունները և մշակումները, նախագծակոնստրուկտորական, տեխնոլոգիական, շինարարության համար նախագծային աշխատանքները, արտադրանքի փորձանմուշների պատրաստումը և գիտատեխնիկական ծառայությունները: Գիտական հետազոտություն և մշակում համարվում է գիտական գործունեությունը, որը պարբերաբար իրականացվում է գիտելիքների հարստացման և նրանց փորձնական կիրառության նոր ոլորտների որոնման նպատակով: Գիտական հետազոտության և դրան հարակից գործունեության տարբերակիչ հիմնական հատկանիշը համարվում է աշխատանքում նորությի առկայությունը: Մշակումներ համարվում են պարբերական աշխատանքները, որոնք հիմնված են հետազոտությունների, փորձի միջոցով ստացված գոյություն ունեցող գիտելիքների վրա և ուղղված են նոր նյութերի, արտադրանքի, պրոցեսների, հարմարանքների, ծառայությունների, համակարգի կամ մեթոդի ստեղծմանը:

### **Արխիվային գործ**

**Անձնական ծագման փաստաթուղթը**՝ որևէ անձի, ընտանիքի կամ տոհմի փաստաթղթային ֆոնդի մի մասն է, իսկ մի շարք դեպքերում՝ փաստաթղթային ֆոնդ, որն ընդունված է պետական պահպանության:

**Գիտատեխնիկական փաստաթուղթը**՝ գիտական հետազոտությունների և տեխնիկական մշակումների ընթացքն ու արդյունքները, ինչպես նաև դրանց արտադրության մեջ ներդրման ուղղություններն ու մեթոդներն արձանագրող գիտական և տեխնիկական փաստաթղթերի ամբողջությունն է:

Արխիվային գործունեության մեջ ընդունված **պահպանման միավորը**՝ փաստաթղթերի քանակի հաշվի այն նվազագույն միավորն է, որն իրենից ներկայացնում է փաստաթղթերի ամբողջություն կամ առանձին վերցված փաստաթուղթ, որն ունի ինքնուրույն նշանակություն:

**Գործը**՝ մեկ հարցի կամ գործունեության ոլորտի վերաբերող փաստաթղթերի ամբողջություն է կամ մեկ փաստաթուղթ՝ զետեղված առանձին շապիկի մեջ:

**Գործերի անվանակարգն** իրենից ներկայացնում է հաշվառման փաստաթուղթ, որում նշվում է գործերի վերնագրերն իրենց պահպանության ժամկետներով: